ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԱՎՍՏՐԻԱՅԻ ԴԱՇՆԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ (Ք. ՎԻԵՆՆԱ) ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. **Անունը, ազգանունը՝** Արմեն Ղազարյան

2. **Զբաղեցրած պաշտոնը՝** ՀՀ ՏԿԵՆ միգրացիոն ծառայության պետ

3. **Գործուղման վայրը և ժամկետները.** ք. Վիեննա, Ավստրիայի Դաշնային Հանրապետություն, 2021թ. հոկտեմբերի 18-ից 20-ը

4. **Հրավիրող կողմը.** Միգրացիոն քաղաքականության մշակման միջազգային կենտրոն (ICMPD/ՄՔԶՄԿ)

5. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).**

Մասնակցել «Միգրացիոն գործընկերության վերանայում. մարտահրավերներ, հնարավորություններ և ռազմավարություններ» թեմայով Վիեննայի միգրացիոն տարեկան համաժողովին:

6. **Քննարկված թեմաները.**

Համաժողովին մասնակցում էին ավելի քան 150 քաղաքական գործիչներ, բարձրաստիճան պաշտոնյաներ, փորձագետներ աշխարհի տարբեր երկրներից՝ մասամբ առցանց, մասամբ ներկա գտնվելով միջոցառմանը:

Համաժողովին ողջույնի խոսքով հանդես եկած ՄՔԶՄԿ գլխավոր քարտուղար Միխայիլ Շպինդելեգերը շեշտել է հետ-քովիդի ժամանակաշրջանում այն մարտահրավերները, որոնք ակնկալվում են առաջիկայում, մասնավորապես՝ զարգացած երկրներում աշխատանքային միգրանտների անհրաժեշտությունը, փոփոխվող ժողովրդագրական իրավիճակը, ինչպես նաև կլիմայի փոփոխությամբ առաջ եկող միգրացիոն խնդիրները: Համաժողովի մեկնարկին ելույթով հանդես է եկել նաև Ավստրիայի ներքին գործերի նախարար Կարլ Նեհամմերը, ով շեշտել է միգրանտների ծագման, ինչպես նաև տրանզիտի երկրներում խնդիրների առաջնային կարգավորման անհրաժեշտությունը:

Փաստելով, որ միգրացիոն քաղաքականությունների ոլորտում արձանագրվել են մի շարք գլոբալ մարտահրավերներ, ինչպիսիք են՝ ՔՈՎԻԴ-19 համավարակը, Աֆղանստանից տեղահանումները, գործընթացների թվայնացումը, հանդիպման

ժամանակ քննարկվել են նաև ոլորտի միտումները երկարաժամկետ կտրվածքով, դերակատարների փոփոխությունները, մարտահրավերներին դիմակայելու, առավել ակտուալ ու խորքային լուծումներ գտնելու, համագործակցության ամրապնդման և առաջնահերթությունների վերասահմանման հարցերը:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Այցի շրջանակում Ա. Ղազարյանը հանդիպել է նաև ՄԱԿ-ի միգրացիայի միջազգային կազմակերպության (ՄՄԿ) տարածաշրջանային գրասենյակի ներկայացուցիչների հետ: Հանդիպմանը մասնակցել են ՄՄԿ տարածաշրջանային միգրացիոն առողջության խորհրդատու Խայմե Կալդերոն, Իմիգրացիայի և սահմանների կառավարման ավագ փորձագետ Պիեռ Ռոսի Լոնգիի, Աշխատանքային միգրացիայի և մարդկային զարգացման ավագ փորձագետ Մայքլ Նյուսոնը, Քաղաքականության և կապի փորձագետ Ամր Թահան:

Կողմերը քննարկել են հայաստանյան միգրացիոն ոլորտի բարեփոխումները, մասնավորապես՝ օտարերկրացիների համար աշխատանքի թույլտվության նոր հարթակի գործարկումը 2022 թ-ի հունվարի 1-ից, ինչպես նաև նախատեսվող ինստիտուցիոնալ փոփոխությունները, որ ամենամասշտաբայինն են լինելու Հայաստանի համար միգրացիայի ոլորտում: Ա.Ղազարյանն ընդգծել է, որ ներկայացված գործընթացներում ՄՄԿ հայաստանյան գրասենյակը գործուն աջակցություն է ցուցաբերում, և սերտ համագործակցությունը նպաստում է համատեղ աշխատանքների իրականացմանը բարձր արդյունավետությամբ:

ՄՄԿ փորձագետները կիսվել են իրենց փորձառությամբ ինչպես իմիգրացիոն հոսքերի կառավարման, այնպես էլ՝ մասնավորապես աշխատանքային միգրացիայի ոլորտի կանոնակարգերի մասով, փոխանակվել են կարծիքներով, պայմանավորվածություն ձեռք բերել հետագա համագործակցության վերաբերյալ:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը. Չկան

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

10. Ստորագրությունը, ամսաթիվը:

22.10.2021